ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՀՐԱՉՅԱ ԱՃԱՌՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԹԻՎ

ԳԻՏՈՒԹՅԱՆՑ ՃԵՄԱՐԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՎԱՐԺԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆՑ

Հայագիտական երկնակամարի լուսատու աստղերից մեկն էլ մարեց. ի Տեր հանգչյալ՝ մեր և արտաքին աշխարհի մեծանուն հայագետներից հրաշակված՝ ականավոր լեզվագետ Հրաչյա Աճառյանը: Նա չէ մահացել, այլ՝ իր գիտությամբ և Արմատական բառարանի նման իր բազմաթիվ արժեքավոր երկերով՝ անմահացել է: Նորա հուշակը ևս առավել կբարձրանա, երբ նորա երկասիրությունները թարգմանվեն օտար լեզուներով և լույս տեսնեն նորա բազմաթիվ արժեքավոր ձեռագիր աշխատությունները և գիտական աշխարհին մատչելի դառնան:

Գիտության մշակը եղել է նաև Ազգի մշակ: Երբ մեր գրասեր ու ջանասեր նախնիք մշակել ու զարգացրել են հայ կուլտուրան, որով յուրայնոց սերն են շահել և որով հայը օտարների հարգանքն է վայելում, ապա նոցա ներկա ժառանգներն են Գիտությանց ճեմարանը և Հայ համալսարանը՝ Աճառյանի նման հայագետներով: Երբ անցյալում հայ մեղվաջան մատենագիրները զարթեցրել ու զարգացրել են հայ ժողովրդի ինքնագիտակցությունը, որի շնորհիվ և պահպանել հայ ժողովրդի ազգային ինքնուրույն և անկախ գոյությունը, ապա այսօր նոցա ժառանգներն են Գիտությանց ճեմարանը և Հայ համալսարանը՝ Աճառյանի նման իրենց գիտնականներով, որով գիտության մշակները դարձել են նաև Ազգի մշակներ: Փա՜ռք և պատի՜վ նոցա:

Հայ գիտության և Հայ Ազգի մեծ մշակ և Մեր անձնական սիրելի բարեկամ Հրաչյան կատարել է իր պարտքը հանդեպ հայագիտության և Հայ Ազգի, որով և անմահացել է. նա ո՛չ միայն ապրում և ապրելու է իր գիտությամբ և թողած երկերով, այլ հավետ պիտի ապրի Ազգի կենդանի հոգու մեջ և լսի նորա «տողորմիա»ը:

Հայտնում ենք Մեր խոր վիշտը Հայ գիտությանց ճեմարանի և Հայ համալսարանի պատվարժան վարչությանց՝ նոցա դժվար փոխարինելի կորստյան առթիվ՝ ի դեմս հանգուցյալ Հրաչյա Աճառյանի, և Մեր մխիթարանքը՝ նորա վշտահար ընտանիքին:

ԾԱՌՐԱԳՈՑՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Էջմիածին, 19 ապրիլի 1953 թ.